




ՄԱՅԳ, ԳԻՄԱԿԱՆ, ՔԱՆԱՔԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՇԱՅ ԱՆՎԱՆ ՀԱՅԱԹԵՐԻՅ
ایمانان * جريدة ارمنية سياسية ادبية اقتصادية وحرية

ՊՏԵՐ ԵՒ ՏՈՐԵԿ
Ժ. ԱՃԷՄԵԱՆ
Խմբագրապետ
ԲՐՈՅ. Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Վարչ - Խմբագիր
Յ. ՊԱԼԵԱՆ

ՀԱՐԱՆ
19
ՅՈՒԼԻՍ
1930

ԲՈՒՄԱՆՈՐԴՈՎՐՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԻԱ ԵՄԵ. 350 Ս Դ
ՎԵՐԱՍՏԱՆ 200 »
ԱՐՏԱՍՏԱՆԻՍ ԵՄԵ. 6 ՏՈՒՐ
ՎԵՐԱՍՏԱՆ 4 »
Հասցե. Բլաժ ՏԷ Գաճճ
ՊԷՅՐՈՒԹ - Լիբանոն

«LIPANAN»
JOURNAL ARMÉNIEN
POLITIQUE LITTÉRAIRE
Place des canons
BEYROUTH LIBAN
DIRECTEUR-PROPRIÉTAIRE
J. ADJEMIAN

2. ՏԱՐԻ ԹԻՒ 477 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ԾԱԲԱԹ ՕՐԵՐ ԸՆԴԻՆ ԵՒ ԿԸ ՀԸԿԱՆ

ՈՒՐ Ե ԴՇՄԱՐԻՏ ՀԱՅՐ

Ընթերցող քեզի հաղար կամ երկու հաղար տարի առաջ պիտի տա-
նիմ, դէպի ապագան, այնպիսի դարու մը մէջ ուր այլեւս վերջ գտած պի-
տի ըլլան ազգայնական կռիւները, եղբայրասպան պատերազմները եւ խաղա-
ղութիւն կը տիրէ երկրագունդիս վրայ:
Պիտի փոխադրեմ քեզ, այդ դարուն պատկանող հանրային մեծ դասա-
խօսարան մը, ուր պատմութեան ուսուցիչը ամէն օր իրեն ենթակայ ուն-
կընդիր աշակերտաց խումբի մը, անցեալի, այսինքն աշխարհի ստեղծման
թուականէն մինչեւ իրենց օրերը, տեղի ունեցած մեծամեծ զէպքերը ազ-
գերու անցուցած շրջափոխումները, ճակատագիրները, ու նկարագրը կը
պատմէ: Աղէկ մտիկ առ սիրելի ընթերցող, երկու հաղար տարի հինցած
ենք եւ այն ատենուայ մարդկային զարգացողական աստիճանով է որ կը
խօսի ուսուցիչը եւ շատ բաներ փոխուած են մեր հիմակուայ գիտ-
ցածներէն:

Ահաւասիկ այս կարգով իր դէմ գտնուող աշակերտաց հին հին ժամա-
նակներու անցուգործները, ազգաց անցուցած եւ ցոյց տուած դիմադրողու-
մները նկարագրելէ յետոյ օր մը կարգը կուգայ 1930 թուականին: Իհարկէ
կարեւորագոյն սեպուած ներկայի մեր տեսածը ազգերու վերաբերմամբ ընե-
լէ յետոյ կանգ կուռն եւ կըսէ աշակերտաց հետեւեալները «Ուշադիր հե-
տեւեցէք, հիմա Ձեզ պիտի պատմեմ ուրիշ ազգի մ'ալ պատմութիւնը որ
այդ ժամանակ Հայ անունը կը կրէր: 1930ի շրջանները, որքան որ պատ-
մութիւնը մեզ կուսանդէ, այս ժողովուրդը զարեւելի մեծ պատերազմի
մը արդիւնք մեծապէս կոտորուած, իր նախնի 4-5 միլիոն թիւէն հա-
զէ 2-3 միլիոն մնացած ըլլալով թափառական եւ զաղթական կը գտնուի
այլ եւ այլ մարզեր, Սուրիա, Լիբանան, Եգիպտոս եւ Եւրոպական կարգ
մը երկրներ, հիմայ այս ժողովուրդեան անցեալը դեռ կարենալու համար,
այդ թուականի ժամանակից պատմագէտի մը հետեւեալ խօսածները պիտի
կարգամ Ձեզ եւ յետոյ իր անցեալի բազմադարեան վիճակով կը հանենք
զինք բնորոշող նկարագրի հիմնական կէտերը, մի քիչ երգիծական է սա-
կայն մեծ խմբատ կայ հիմակուայ մեր ըմբռնողութեամբ, եւ ահա կը խօ-
սեցնեմ զինք:

Կոստանդնուպոլիս, Ռօպէրթ Գօլէն, Հիսարի բարձունքը լուռ մէկ գի-
շեր մայրիկներու կողքին ընկողմանած, Վափուրի նեղուցին վրայ խառնած
երթեւեկող շողոքներու արձակած լուսարձակներու համոտեղութիւնը
զիտած ժամանակս ներշնչուեցայ սապէս: Պօլիս 60-70000 հայ կայ կըսեն
ասոնք հայ են, իրենց պապերու Տիգրաններու, Վարդաններու թոռները,
թէ ոչ տարբեր մէկ ազգ: Պատրիարքարան մը ունին չկոխներու օճախ է,
կաթոլիկներն ալ ունին բան մը, պատրիարքարան է, արքիպիսկոսներու
հաւաքոյթ է, ինչ գոյն ունի բնաւ յայտնի չէ եւ հոտ ալ յարատեւ կռիւ
կայ: Բողոքական ազգապետ մը կայ եղնի, ինք գրեթէ բաներ մը «Կոչ-
նակի» մէջ եւ իրեն հակառակ գրեթէ են ուրիշներ, բոլորովին վրան գոց
բան մը: Հոն ալ կռիւ կայ: Թեթիկ կը հրատարակեն երեք հատ օրաթերթ
ոն ալ, «Ազգարար», «Առաքում», «Ժամանակ» եւ «Երբ Լուր» իրիկաթերթ
բազէք ամէն օրուայ էջերը երեքին ալ եւ իրարու դէմ հայհոյութենէ զատ
բան չէք գտնիր: Ասոնք են հայը, Հայկայ զաւակները, Բուրիցս ոչ, ե-
լիւ, Ելիւ փախը: Այս քաղաքէն, հոտ քու քննադատող հայ մը չկայ, ուրեմն
ե՞ս ալ հայ չեմ կը հարցնեմ թելադրողին, եւ պատասխանը կըլլայ սա:
Հայ եղբոր պարտական կզգայ ինքզինք, քանի որ հոս հայ չկայ, մեկնիլ
արտասահման, փնտռել հոն գուցէ հոն կրնայ գտնուիլ: Կա համամիտ եմ
ուր երթամ Կարպուզի, Հալէպէն սկսէ ըստ: 1930 մարտ, 15 թուականին
Կ. Պօլսէն Հալէպ հասայ: որ Քրտանական թեմակալութեան տակ կը գտնուի
մէկ օր յետոյ այցելեցի տեղւոյն Առաջնորդ Սիւրմէեան Սրբազանի, յանձ-
նորարուած է՛ իրեն, իմ զէրքը եւ հոգեբանական յօրինուածքը նկատի
ունեցաւ այս մարդը եւ խորապէս համոզուած գոյացնելէ յետոյ թէ անվնաս
եւ հասարակութեան նուիրուած հոգեկան մէկն եմ, բացաւ իր սիրտը: Հար-
ցուցի թէ ինչ է ժողովուրդեան վիճակը, գոհացուցիչ պատկեր կը ներկա-
յացնէ թէ ոչ մեր աւանդական խառնափնդորութիւնը, պատասխանը սա
եղաւ: ձգէ իզմայր ազգ կոչուելու արժանիքէն զուրկ ենք մենք: Դաշնակ-
ցականը ունի իր հողը, Հնչակեանը իրենները, Ռամկավարը չեմ գիտեր որ
կողմը ունի, ոչ զեկ կայ եւ ոչ ալ զեկավար, եւ կը ներկայացնեմ մի-
այն չէզոք եւ ազգին համար փրկարար ճամբան եւ ինծի ալ մտիկ ընող
չկայ:

Առած եմ փափաքած տեղեկութիւնը եւ կը հասկնամ թէ առաջնորդա-
րանի անկնցով իրմէ Կուրո հայութիւն գոյութիւն չունի, ուստի ինչ ընել
ուր փնտռել, արտասահման եկանք որ բուն հայը գտնենք, այնպէս ըս-
տեցաւ մեզ Պօլիս ներքնադէմ չէ:

Բրոք, Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

[Շարունակելի]

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս ընթերցողներ կը յիշեն, Սուրիական սոցիալական Սահմանադրու-
թիւնը լուծելէ եւ սուրիական սահմա-
նադրութիւնը հռչակելէ վերջ, Լիբա-
նանի եւ Սուրիոյ Բ. Գոմիսէր պրն.
Բօնսօ կարեւոր միսիոնով եւ ար-
ձակուրդով մեկնած էր Ֆրանսայ
ուր առիթ ունեցաւ պատկան շրջա-
նակներու տուրու հոգատարեալ եր-
կիրներու մասին հարկ եղած լուսա-
բանութիւնները իսկ անցեալ ամսոյ
25ին Ազգերու Դաշնակցութեան հո.
գատարութեանց Յանձնաժողովին
յանձնեց իր 1929 տարեւ ջանի ընդ-
հանուր տեղեկագիրը որ հակառակ
իր նախորդին պէս, Ժուլիէնէլի ա-
ռաջարկին, իր իսկ պնդումներուն
վրայ նկատու առնուեցաւ Զինկուկ
Նիստի մը մէջ:

Սուրիական սահմանադրութիւնը
յոյտարարող ողջախոս մարդկանը
նոր ընտրութեանց համար միջոց նը-
շանակած է իր վերադարձը, հետեւա-
բար յառաջիկայ հետեւեալներին է որ
տեղի պիտի ունենան երեսփոխա-
նական ընտրութիւնները:

Ինչպէս քաղաքակիրթ մեծ ու
փոքր բոլոր երկրներու մէջ նոյն-
պէս ի Սուրիա ընտրութիւնները,
իրեւ ժողովրդական հաւաքական
ձայնի եւ կամքի արտայայտութիւն
ունին մեծ կշիռ, ու կը բռնան ըն-
տրական պայքարներ:

Յաւելուածական յոգեւորներով
Սուրիական սահմանադրութեան հա-
կադաւարական տրամադրութեանց
չիզոքացումը պատճառ եղած էր
Սուրիոյ ազգայնականներու մտահո-
գութեան: Բ. Գոմիսէրը, իր այս
պատմական աքսէն վերջ, շրջան
մը կոտորակ քովանգակ Սուրիոյ մէջ
եւ տեսակցութիւններ ունեցաւ ազ-
գայնական շէֆերու հետ սակայն իր
մեկնումէն ի վեր զանազան կիզրոն-
ներու մէջ, տեղի կուենան ազգայ-
նականներու համախմբութիւնը նպա-
տակ ունենալով պաշտպանել ի-
րենց տեսակէտները:

Սուրիա ունի քանազան հոսանք-
ներ ծայրայեղ ազգայնականներ մի-
տպետականներ հանրապետականներ,
չափաւոր ազգայնականներ եւ կոտա-
վարականներ: Ծայրայեղ ազգայնա-
կաններ կը ջանան կատարել ազնոտ
ընտրութիւն տիրանալու համար ու-
զատ կառավարութեան: Նոյնպէս
իւրաքանչիւր հոսանք ունի իր, սե-
փական տեսակէտը այնպէս որ ըն-
տրութեանց համար կանխատեսուած
ժամանակն ալ կը մնայ խնդրական,
ազգայնականներ, իրենց կազմա-
կերպեալ վիճակին վստահելով կը
նախընտրեն հոկտեմբերը, ուրիշներ
կը ջանան սպասել 1931 տարեւայ
Մարտի, Մայիս եւ Նոյնիս իսկ Յուլիս
ամիսներուն:

Եւր. կարգալ Բ. Էջ. Բ. սիւնակ.

Կամրքներ

ԳՈՐԾՈՒՆԵԱՅ ԴԱՏԱՌՈՐԸ

Կաշառակեր պաշտօնեայ մը,
ժամանակին, կը յաջողի դատաւո-
րի պաշտօն ձեռք բերել հեռաւոր
քաղաքի մը մէջ, իբրեւ միջնորդ
ունենալով իր ձեռքին տակ, իր խմո-
րով շաղախուած Այի անուն անս մը
Դատաւորը կապառէ օրերով որ
խնդիր մը ներկայացուի իրեն եւ սա-
կայն իզուր. ունեցած պահեստի
զուճարն ալ կսկսի կամայ կամայ
ջուրը քաշել ըստ ժողովուրդական
բացատրութեան:

— Այլ, կըսէ դատաւորը, պիտի
փճանանք քնա գործ գտիր:

Այլ կ'երթայ, կը չափէ քաղա-
քին փողոցները, օ կը սլքտայ հրա-
պարակներու եւ շէն վայրերու մէջ,
սակայն կը վերադառնայ ձեռնու-
նայն:

Կ'անցնին օրեր, շաբաթներ, դա-
տաւորը յուսահատական մէկ վայր-
կեանին երբ իր գլխուն պէս պարտապ
դատարանի պատուհանին առջեւ
նստած կը մտածէր, կը անսէ որ
հոս մը, պատի մը վրայէն, կը մտ-
նէ մատուկայ պարտէզի մը մէջ:

Այլ կը զրկուի եւ ոտիկանի մը
յոխորտանքով, դատարանին առջեւ
կը բերէ հատերը:

— Բարեկամ, կըսէ գոտաւորը
սաստող թոնով մը, հաւգ ոտ պա-
տին վրայէն ցատկելով մտաւ գրտո-
ցիի պարտէզին մէջ ու ձգեց խոշոր
քար մը, որ ելի իջնար անցորդի
մը ուղիուն, անպայման կը պատ-
ուէր զայն, անբան տեսուելի մը զոր
ծած ոճիւրն պատմաստանատուն ըստ
օրինի անոր տէրը կը համարուի հե-
տեւարար ոճրագործ եւ ու տուգան
քի արժանի:

Եւ ինչ հաւտէր կը հարկադրուի
վճարել իր ոճրագործ հաւուն իրա-
կան արժէքին տասնապատիկը աւե-
լի ու ապտուել օրինական հետա-
պնդումէ:

Ու գոտաւորը իր անգործութեան
եւ անկուտութեան օրերը տանելի
ըլլաւ հաւուն պէս փետտելով հաւուն
չափ միամիտ հատերը:
Սեր ազգային կեանքի արդի գը-
ուազները բարացուցող այս խմա-
տակց պատմութեամբ լայնօրէն կը
պատշաճի հայրենաստուած հայ հատ-
ուաքներու գէմ մեր երկրին հայրե-
նակից թուրքերէ ուսնց կողմէ կա-
տարուած բրգեականալին:

Իսկ ինչ որ աւելի տարօրինակ է
թունաւոր օճառի, թունաւոր շաքա-
րի, մարդկային ոսկորներով շաքար
շինելու եւ Հիւս. Սուրիոյ սահմանա
զուլսին վրայ հայկական օճախ մը
հիմնելու առաւելներէն վերջ, հա-
ւա փետտումի գերը սկսած են կատա-
րել Պօլսոյ թուրքերէն թերթերէն ու-
մանք, թրքական կանոնաւոր բշտ
բու, մահադիք օգանաւերու եւ սար-
սափազգու ինչպանութիւնը գէմ կա-
ուող քրտական հրոսախուսերու մէջ
ջանալով տեսնել հայկական ոյժերու
ՕՏԱՆ ԱՐԴԻ:

Եւրոպայի Մեծ Եւ փոքր Համաձայնութիւնը

Եւրոպական տէրութեանց երկու խմբակցութիւնները, որոնց հիմ կը ծառայեն բացի քաղաքականէ տընտեսական շահերու ապահովութիւնը իրենց ծագումը կը պարտին մեծ պատերազմին:

Մեծ համաձայնութիւնը, որ Գերմանիոյ դիմադրութիւնի եւ գերման ծառայարարութեան գերիշխանութեան գէտ կանգնուած պողպատեայ պատուարն էր, աւելի ուժեղացաւ ի տալիս մասնակցութեամբ, որ իր գաղտնիքի յանձնառութիւնը գրծելով եւ իր գաղտնիք Գերմանիան ու Աւստրիան լքելով, յոյժ քրիթիքական մէկ րոպէին յարած էր Մեծ Համաձայնութեան:

Մեծ Համաձայնութիւնը, յաղթութեան դափնին խելէ եւ Գերմանիոյ Կայսերապաշտութիւնն ու ճարտարաբանութիւնը ծուկի բերելէ վերջ շատ բան կորսնցուց իր մեծութենէն իտալական իր Ֆաշիսթ կառավարութեամբ ու տիեզերական աւարարախութեան մէջ զրկուածի հանգամանքով, Մեծն Բրիտանիան իր անվերջաւ լոյս գաղթավայրերով, Ֆրանսան իր գաղաւթ թշնամի Գերմանիոյ պարտութեամբ, կը ջանան մեծ ըլլալ ասանձին: Բաց աստի շահակցական հակամարտութիւններ եւ ներկայ ու ապագայ ակնկալութիւններ քաղաքական ինքնուրոյն հայեացքներ, գերիշխանական յոռի ձգտումներ, երէկուան գաղտնիքները վերածած են հակառակորդներու, աւելորդ մրցակիցներու: Յետ պատերազմեան իրար յաջորդ Դաշնագիրներ, խորհրդաժողովներ, որոնք մեծ մասամբ կը մնան անգործադրելի, խօսուին փաստեր են մեծ համաձայնութեան քայքայման:

Ստիպողական պէտքի մը առջեւ քրիթիք վայրկեանի մը մէջ ծագում առած մեծ համաձայնութիւնը քաղաքական շատ փնտրելու տեսու իր պատակումէն, եղիպտոսի, Իրաքի, եւ Հնդկաստանի շարժումները, հանգէպ Բրիտանական Կայսրութեան արդիւնք են ուղղակի մեծ համաձայնութեան քայքայման: Եւ ո՞վ կրնայ երաշխաւորել որ միեւնոյն վտանգը պիտի չ'գայ սարսելու մեծ համաձայնութեան միւս անդամներն ալ:

Կայ նաեւ փոքր համաձայնութիւն մ'ալ, երրորդութեան թիւով իրարու դողուած Չեխոսլովակիայ, Եւրոպայի քաղաքական եւ Բուլղարիան: Փոքր համաձայնութիւնը իր գոյութիւնը կը պարտին վերստին, Մէն-ժէր - Մէնի, Թրիանոնի Նոէի դաշնագիրներուն ինչպէս նաեւ մեծ համաձայնութեան բարեացակամութեան: Այս օր միայն Ֆրանսան է որ համակիր ու պաշտպան կը մնայ փոքր համաձայնութեան ու Մուսոլինիի կառավարութիւնը 'անոր հետ կը յարաբերուի շահագիտական նկատուածներով:

Տասն ու մէկ տարի առաջ կազմուած այս համաձայնութիւնը այս տարի ալ ունեցաւ իր տարեկան համագումարը որու կը մասնակցին ըստ ընկալեալ սովորութեան Արտաքին Գործոց Նախարարները:

1930 ի համագումարի մէջ ն'աւտի առնուած են երեքները շահագործող զանազան հարցեր եւ ինչ որ աւելի մեծ պատիւ մ'է իրենց համար իրենց համաձայնութիւնը աւելի դժուար հիմնուած իրար դնելու համար խմբագրած են ներքին կանոնադրմը:

Փոքր համաձայնութիւնը իր համերաշխ գործակցութեամբ ու ճշմարիտ համաձայնութեամբ կուգայ հասկցնել մեծ համաձայնութեան թէ մընայուն ու անխախտելի համաձայնութիւնը էական պայման է յաջողութեան, յառաջդիմութեան եւ ապահովութեան: Փոքր համաձայնութիւններ, ինչպէս Կովկասեան Հայ թաթար - Վրացականը, Սուրիոյ - Լիբանանը որոնք հովանաւորող մեծ տէրութեանց հակակշիռով կը պահեն իրենց գոյութիւնը, կարող են հետեւիլ եւրոպական փոքր համաձայնութեան օրինակին, տիրապետու համար անկախ վարչաձեւի եւ իրենց հովանաւորները փրկելու համար վարչական բաւելորդ տաղտուկներէ եւ ներթափան մեծ գոհողութիւններէ:

ՅԻՄԻՆԷԼ

Բնական է ամէն հոսանք իր տեսակէտին առնելով ունի նաեւ հոգատար կառավարութեան ձայնն ու հեղինակութիւնը, զոր ազգայնական բանաստեղծ մը կը փափաքի վերածուած տեսնել քաղաքակրթիչ աչքի մը պարզապէս Սիւրիոյ աղատ տէրութեան վրայ հսկողի հանգամանքով միայն օժտուած եւ զուրկ վարչական ամէն իրաւասութենէն:

Երեւոյթներէն կարելի է դատել թէ բաւական շունդալից պիտի ըլլան յառաջիկայ ընտրութիւնները, ծրագիրներով եւ կուսակցական հայեացքներով իրարու ներհակաբար գործող կուսակցութեանց ջանքերը այսպէս խորհիլ կուտան: Ծանօթ լիտեր Հանանօի, Աթաթի, Իդրիսի փաշայի, Սաիտ Մէհապիի եւ այլոց կողմնակիցները այժմէն իսկ շարժման մէջ են:

Հոգատար կառավարութեան կիշնայ խնդիրը լրջօրէն նկատի առնել եւ Մայիս 22-ի համաժողովի ղեկաւարդական աքտով մը լուծել նաեւ ընտրական խնդիրն ալ, Ու վստահ պէտք է ըլլալ, հոգ. կառավարութիւնը միշտ օժտուած է հարկ եղած վարչական արթնութեամբ:

ՅԻՄԻՆԷԼ

ՀՈԳԱՏԱՐԵԱԼ ԵՐԿԻՆՆԵՐՈՒ ՀԱՍԱՐԱԿԱՅ ՊԻՏՅՅՆԷԼ (1929)	
ՀԱՍՈՅԹՆԵՐ. —	
Մաքսա. Հատոյթ.	8,000,750
Տնտես. եւ Երկր. Սպասարկ.	4600
Վառօգի Սպասարկ.	85000
Ընկ. Հակակշի Սպասարկ.	28705
Երկաթուղիի Ծահաբուծի	50000
Պանք Տը Սիւրի	65000
Պանքաներ. մէջ գրուած	
գումարներու Տոկ.	35000
Համագումար 9 միլ. 18305	ոսկի
ԵԱԿԻՆՆԵՐ. —	
II. ՈՍԿԻ	
Մաքսատան վարչութ. 1 միլ.	310503
Թօթ - Հեռագիր. վարչ.	102369
Հանր. Պարտուց. »	106614
Տնտես. եւ Երկրագ. »	73242
Հնաբան. Սպասարկ.	24719
Ձանազան Եպատներ	356000
Երկաթուղի	50000
Հողային Սպասարկ.	18618
Ելեւ. »	10560
Հանրային պարտքեր	675000
Հող. Բաղաւ. Բաժնի ծախք	675000
Հատուցող կարգի ծախքեր	100000
Հատուցող Բաշխում 1 միլ.	167399
Գումար 9 միլ. 18305	ոսկի

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ

Մեր յարգելի պաշտօնակից «Ազգակ» թերթի Տէր եւ Տնօրէնի Հայր Պրն. Ռուբէն Պալիանի փութացնել 1929 թուոյ Բ. Վիգամսեայ Քաճառողագինը 165 Սուր. դր. ինչպէս նաեւ 50 դր. իր րութեւ Ռուսոյցական պաշտօնի յայտարարութեան մնացած: Տճեա. Տազնապը դարմ. համար,

ԿԻԼԻԿԵԱՆ ԵՐԿՍԵՐ Վարժարաններու ՄԻՋԵՄԱՆ ԶԱՆԴԵՐ

Բաղաւ. կարեւոր դպրոցներէն համարուող ու 10 տարեկան լիւեր, իր համակիր - անգամուհի եւ անգամներու լուծանքովը գոյութիւնը պահող, ու 600 որդի եւ որդեկներու տոհմային առողջ կրթութիւն մը տուող Կիլիկեան Երկսեւ Վարժարաններու մրցման հանդէսը տեղի ունեցաւ 29 Յունիս կէս օրէ առաջ, ժամը 9-ին Հայկական Լսարանի օդատուն ու մաքուր սրահին մէջ, ի ներկայութեան հոծ ու ընտրեալ բազմութեան մը:

Նախագահ Տ. Ներսէս Պապանի քաջաման խօսքէն վերջ երկուտ խումբը աստիճանաբար շուրջ կահար Պրն. Յակոբ Տ. Խորէնեանի «Այս Երկսեւ տակ» խմբի մը երգից, խելով ծափեր ներկայներէն: Մրցման մասնակցեցան 12 օրիորդ եւ պատանիներ, որոնք են Օր. Ժէրմէն Տէպպաղեան, Մարի Թօփեւան, Սիրարի Պարոնեան, Վերդին Աթթարեան, եւ Եօթեր Թաշճեան, Պրն. Երուանդ Իլի Գէորգեան, Յակոբ Խանձողեան, Եղուարդ Որբերեան, Աւետիս Աթթեւեան, Թորոտ Տ. Թորոտեան [այս վերջինը հիւանդ ըլլալով բացակայ էր]:

Արտասանութիւնները, չորս լեզուներէն էին, Հայ. Թրքեր. Արաբ. ու Անգլերէն. որքան հաճելի կը թուէր արաբերէն արտասանութիւնները, որոնք կը լսուէին հայ երիտաւարներու բերնէն, կարծես թէ աւելի ինչ արաբներ ծնած ըլլան, նա մանաւանդ Օր. Սիրարի Պարոնեանի առաջնութիւնը, իրապէս զմայլելի էր, նմանապէս Պրն. Յակոբ Խանձողեանը որ երկու Լիւանեաներու նկարագրութիւնը ըրաւ:

Օրուան յառուկ ժուրի մը կազմուածէր նշանակելու համար յաջողները, որոնք պիտի ստանային մրցանակներ:

Մրցողները սկսան գիրար գերադասել, այնպէս որ 10 վայրկեան վերջ տուաւ իկ որոշումը. արդիւնքը սա եղաւ:

Հայերէնի մէջ Օր. Ժէրմէն Տէպպաղեան եւ Սիրարի Միւսաբեան հաւասար, Արաբերէնի մէջ Օր. Եօթեր Թաշճեան եւ Օր. Սիրարի Պարոնեան հաւասար, Թրքերէնի մէջ Պրն. Աւետիս Աթթեւեան եւ Անգլերէնի մէջ Օր. Երուանդ Խանձողեան, որոնք ստացան իրենց նուէրները:

Հայերէնի մէջ Պրն. Եղուարդ Որբերեան, որ յաջող եւ համարձակ կերպով արտասանութիւն մը ըրաւ Դէպի Մայրենի լեզու, եւ Օր. Ժէրմէն Տէպպաղեան իր Մասիսով եւ «15 Դար Առաջ»ով ծափեր խելց ներկայներէն, Պրն. Յովհաննէս Սվաճեանի կողմէ ստացան մէկ մէկ տարուան «Երիտասարդ Հայաստան»:

Երգչախումբը երգեց «Յառաջ Նահատակ» եւ «Յառաջ Ընթանանք» երգերը, եւ մենեք մըն ալ Օր. Մարի Թարկեանի կողմէ: Ներկայները, զուարթ սրտով մեկնեցան սրահէն Յունիս 6 Մանկապարտէզի, եւ Յունիս 13 վկայականաց բաշխման հանդէսներուն ներկայ գտնուելու հաստատ որոշումով:

Ա. ԶԱՆԷՆ

3200 Գիւղագնացներ

Ծարդ 3200 գիւղագնացներ միայն հասած են Լիւբան. նորերու հարկներէ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՈՎԵՏՈՒՅՑ ՄԵԶ
Երկրագործական բերքերու պետականացման պատճառով սկսած է սղութիւն, նւազած է ցանքը եւ ծայր տուած սովը: Ու քրտնոյ մէջ անօթի գործաւորներու կողմէ մեծ ցոյցեր կատարուած են: Ոստիկաններ հարկադրուած են զէնք գործածել:

Պաղեստինի Դէպքերուն պաշտպանականութեան

Ժընէվի Ազգ. Դաշնակցութեան Հոգաւարութեանց Յանձնաժողովը ի մօտ. պիտի հրատարակէ իր տեղեկագիրը Պաղեստինի ծանօթ դէպքերու շուրջ:

Համաձայն առնուած ստոյգ տեղեկութեանց անդեպ-գիրը շատ խիստ կերպով կը քննադատէ Բրիտանական Վարչութիւնը իր զանցառութեան պատճառաւ. քննադատելով միանշանայն անոր գաղթական ազդեցութիւնն ու Պաղեստինի մէջ հրէական Ազգային Օճախ մը հիմնելու յանձնառութիւնը չյարգելով:

Տեղեկագիրը, Բրիտանական Խորհրդարանին Յանձնաժողովի տեղեկագիրն հակառակ ըլլալով, պատասխանատուութիւնը կը բեռնէ Հրէաներէն աւելի Արաբներու վրայ:

Աւստրիա եւ Եւրոպ Դաւանակ.

Աւստրիական կառավարութիւնը ի պատասխան Պրն. Պրիանի յիշատակագրին յայտարարած է իր համաձայնութիւնը Համաեւրոպական Դաշնակցութեան պայմանաւ որ կարելի եղածն չափ շատ ըլլայ անոր մասնակցող կառավարութեանց թիւը: Միշտ կապուած ըլլայ Ազգ. Դաշնակցութեան, ջանայ կազմակերպել Եւրոպայի Տնտեսական ոյժերը եւ իսպառ ջնջել պատերազմը:

ՀԱՊԱՊԱՐԿԵԱՆ ԻՇԽԱՆ ՄԸ ԲԱՆՏԱՐԿԱՌԱՑ

Դիւ-Եօթերի մէջ բոնտարկուած է 1է5 Բօյգ Լիւրիգուքը եւ խնդրագիրով մը աղաչած որ թոյլ տրուի իրեն վերագտնուելու Աւստրիա ուր իր մեծ եղբայրը մեծ գուք Բայնի մեծած է: Իշխանը բոնտարկուած է 80,000 ռիբլին արժող եւ Աւստրիոյ Մարիաթերէզա Լիւրիգուքուհին պատկանող մոնետակ մը ծախած ըլլալուն պատճառաւ:

ԱՆԻՄՈՒՆԻ ՏՈՒՆԱՆՏԸ

Լոս Անճելոսի (Դալիֆորնիա) մէջ ազարակի մը հաւանցը, որ աշխարհի ամենամեծն է, ունի 300,000 ամող հուեր եւ 200,000 վառեակ, եւ համապատասխան թուով առաջադներ:

Հաւանցին այս կէտ միլիոնէ աւելի բնակչութիւնը կ'ուտէ տաղեկան մէկ միլիոն լիւրա խիւս:

Հաւանցին արտադրութիւնն է տարեկան 30 միլ. հաւկիթ:

140 Սնանկութիւններ

Ծարդ 140 սնանկութիւններ եղած են 75ը Առեւտ. խառն դատարանի իսկ 65ը Լիւրանեան դատարանի կողմէ: 141 րդն ալ պատրաստ է:

Կարեւոր

Մեր Յարգելի Բաժանորդներուն

Թերթիս Արտօնատներն ու իրաւաբանները շրջանային այցելութեան հրած են Ջահլէ, Դամասկոս, Հոմա, Համա, Հալէպ, Անտիօք, Դըրըզ Խան, Ալէքսանդրիթ, Բէսայ Սուէյախ:

Կը խնդրուի մեր յարգելի բաժանորդներէն ու մամուլի համակիրներէն ընծայել հարկ եղած դիւրեւ թիւները:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՅՈՒԼԻՍ 14

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բշ. առաւօտունը զօրանցք կա-
տարուեցաւ ձկնորսութեան ֆրանսէի-
մէջ մասնակցութեամբ բոլոր զին-
ւորական իշխանութեանց: Պատուա-
նշաններու բաշխումէ վերջ տեղի
ունեցաւ հիւանդի թափօր մը որու
կը մասնակցէին Բ. Գոմէսը փո-
խանորդը, հանրապետական նախա-
գահը, ծովային ցամաքային և ոյժե-
րու հրամանատարները:

Ֆրանսացի սքաւաթներ աւելի
փայլ տուին թափօրին:

Սէն լուի եկեղեցիին մէջ հանգի-
սաւոր պատարագ մատուցուեցաւ:

Երեկոյն Զէյթունի թաղի մէջ
կատարուեցաւ հրաշալի հրավառու-
թիւն:

Իսկ զիշերը մեծ ջահագնացու-
թիւն քաղաքին գլխաւոր փողոցնե-
րուն մէջ:

ՊԱՏՐԱՐՔԱԿԱՆ ՅՈՒՆԵԱՆ

Անցեալ կիրակի Հալէպի քաղաք-
ացի հասարակութիւնը կատարած է
պատրիարք Տ. Փօզէֆ Էմմանուէլ
Բ.ի երեսնամեայ պաշտօնավարու-
թեան յորելանքը:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՆ

ՆԻԹԵՐ ՄԱՐՏԷԶԵՐԾ

Առեւտրական սենեակի վարչու-
թիւնը ներկայ եօթնեակի իր նիստին
մէջ խորհրդակցութիւն կատարած է
երկրագործական նախաձեռնութեան
մաքսատուրքէ զերծ կայացուելու
պարագային շուրջ:

ԸՆՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔ

Շէլիս Մուհամէտ Ճիւր, խորհր-
դարանի ներքին կարգադրութիւնը
մշակելէ վերջ, սկսած է պատրաս-
տել ընտրական նոր օրէնք մը քը-
րանական և իրաքեան օրէնքներու
հետեւնուելով: Նոր ընտրական
օրէնքը պիտի յաճուի խորհրդարանի
իր յառաջիկայ նիստին մէջ քննելու
համար:

ՐԷԺԻԻ ԾԱԽՈՒ ԾԱԽՈՆՆԵՐԸ

Րէժիի ընկերութիւնը իր պատ-
րաստ մթերքէն 435 հազ թրքական
լաւազոյն ծխախոտը ծախու հանած
է այս ապրանքը ծախու առնուած
է մօտաւորապէս 13 հազար ոսկիի
Անտարաուսի կողմէ որու գործարա-
նը կը գտնուի Պիքֆայի մէջ:

ՊՈՒՐՁԻ ԹԱՂԱՄԱՍԸ ԵՒ «ԼՕՐԻԱՆ»

«Լօրիան» իր 16 յաւիտի թիւով
գիտել կուտայ ցաւով թէ քաղաքի
կեդրոնը պուրճի հրապարակին կից
գտնուող կարգ մը շէնքեր, որոնք
սեփականութիւնն են մեծ կայուա-
ծաւորներու հակառակ տրուած ու
րոշման կը մնան կանգուն, մինչդեռ
մի քանի ունեւորներու ենթարկուե-
լիք ֆրանսերով մտահոգուող պատ-
կան իշխանութիւնը տասնեակ հազար
հազ զաղթականներու տեղափոխու-
թեան առթիւ քնաւ խղճահարութիւն
ցոյց տուած չէ:

ԿՈՒԻ ԳԱՏԷ ՇԱՆԹԱՆԻ ՄԷՋ

Հալէպի Ֆարձօ սրճարանի երկու
«հովարտ» յաճախորդներ, իրենց
օղիով աւելի տաքցած գլուխէն ա-
ռաջնորդուած կառաջարկեն երգչու-
հի մը երգել իրենց նախասիրած եր-
գը, երգչուհին չուզեր զոհանքով
տալ նկատելով որ երկու մրցորդներ
տարբեր եղանակներ կուզէին իրմէ.
տաք գլուխ էֆէներ կսկսին վիճա-
րանիլ, ապա իրարու հայհոյել և
վերջապէս կուռիլ, միւս յաճախորդ-
ներն ալ կը միջամտեն և սրճարանը
կը վերածուի պատերազմական ճա-
կատի. ուսմի գեր կը կոտորեն ա-
թուներ սեղաններ և գաւաթներ:
Ոստիկաններ կը միջամտեն ու կար-
գը կը հաստատուի:

Մ. Խ. Ականջը խօսի հայերու
մամուրնակ կռիւներէ հաճաք ըն-
դացողներուն:

ԱՐԴԱՐ ՊԱՏԻՍՏ ԵՐ

Օքէ եղբակապոս որ եկեղեցա-
պատկան նուիրական առարկաներ
գողցած ըլլալով վեց ամսուան բան-
տարկութեան դատաւարուած է,
վերջնականապէս արտաք ու ան է
յոյն օրթոթօքս եկեղեցականութենէ
Պէյրութի յայտ մեղաւորուող եկեղ.
իշխանութեան այս վճիռը հաղորդած
է Ներքին գործոց նախարարին:

ԵՌԻԿՈՍԱԿ ՏՈՐՄԵՂ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Բ. Գոմէսը փոխանորդ պրն.
Թէթրօ հացկերոյթ մը տուած է ի-
պատիւ Պէյրութի այցելող եռեկուսա-
ընդօժեաններու սպաներու, նաւաս-
տիներ Պապայէք և Դամասկոս մեկ-
նած են 3 ընդօժեանքը Պէյլուի մեկնած
են ուրախ օր:

ՃԱՆԻՃԻ ԶՈՐԱՅՈՒՄ

Աւողջապահական սպասարկու-
թեան և կառավարիչ պր. Թազլայի
ջանքերով չորցուած են, նահրի եր-
կու կամուրջներու մէջ տեղ գտնու-
ած ճախճախուները: Աշխատանք-
ներ կըլլան այդ տեսակ հակառոշ-
ջապահական վայրերը օր առաջ մաք-
րելու:

ՃԱՐՄԻԿ ԳՈՂԸ ԵՒ ՄԻԱՄԻՏ

ՇՕՖԵՈՒԸ

Շէթօրայի Ճիտէյտի գեղացի շո-
ֆէօր Հիւսէյին Ֆարաթ երբ մէկ
ճամբորդով կը մօտենար Դամասկոսի
ճամբորդը խնդրած է վայրկեան մը
կանգ առնել և երբ շօֆէօրը կառքէն
կ'իջնէ ճարպիկ ուղևորը սրնթաց
խոյս կուտայ օթօյի հետ: Ոստիկան-
ներ Պապ գիւղի մէջ կը գտնեն օթօն
և կը հաստատեն թէ պանդոկապե-
տէն 3 օսմ. հնչուն ոսկի փոխ տ-
րած և գործիք մը գնելու պատրուա-
նքով հեռացած է:

Բնական է գողը չվերադառնար:

ՊԱՆՏՐՈՒՄ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ

Կառավարութիւնը Պանտրոյի գոր-
ծին համար 15օր առաջ նշանա-
կած էր վեց քննիչներ սակայն նը-
կատելով որ այս թիւը անբաւարար
է որոշած է բարձրացնել 20ի:

ՆՈՐ ՍԻԿԱՐԷՅՆԵՐ

Սիւրիոյ և Լիբանանի ծխախոտի
Ընկերութիւնը, որ արտասահմանէն
մեծաքանակ ծխախոտ բերել տա-
լով իր գրամագուլիւր 300,000էն 6-
00000ի բարձրացուցած է, ամսոյս 17ին
հրապարակ հանած է 3 միլ. սիկա-
րէթներ առաջին շրջաբերութիւնը,
սիկարէթները որոնք Սուտա, Մաս-
Բէթ Կաթիսիան, Կամսարական այլ
անուններ կը կրեն կը ծախուին 15 և
35 լըշ. 20 սիկառնոց տուփերով:
Իսկ Մաթրուսի տեսակը կը ծա-
խուի 6 - 12 լըուշի: Միեւնոյն տու-
փը, ծխախոտով լցուած կարծէ 5
լըուշ:

Տնտ. օգնականը քարմ. համար

Դամասկոսի Առեւտրական Սեն-
եակը Բ. Գոմէսը թեան հաղոր-
դած է հետեւեալ առաջարկները:

Ա. Տեղական ճարտարարուեստի
վերաբերեալ նախնական նիւթերը
մաքսատուրքէ զերծ:

Բ. Երկրի անտեսական կացու-
թեան համապատասխան մակարդակի
իջնցնել մաքսատուրքը:

Գ. Նաւահանգիստի Ընկերու-
թեան կողմէ դանձուած 100 էն 5
յաւելուածական տուրքի ջնջում:

Դ. Ուսումնասիրել և գործա-
դրել 1929 Սեպտեմբերի մէջ Դա-
մասկոսի ճարտարարուեստական զօն-
կրէյի որոշումները:

Սուրիոյ և Լիբանանի բոլոր
առեւտրական սենեակներուն նալ հո-
գորդուած է նոյնը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քրդական Ըմբոստութիւն

Ջիւանի շրջանի մէջ համախմբուած քրդական խումբ մը ցրուած է թր-
քական սյոթերու առջև: Նոր ըմբոստներ կը փռ ձեն. սահմանագլուխէն
անցնելու օգնել իրենց լիւսկիւն:

Գիւղացիներ, որոնք լեռները անպատանած է ն, սկսած են վերադառ,
նալ իրենց տուները:

Թրքական կառավարութիւնը որոշած է շարունակել ճնշումը կարեւոր
ոյժեր պահելով ապստամբներու գտնուած վայրերուն մէջ,

Ֆրանսո-Իտալական Բանակցութիւն

Փարիզի Իտալական դեսպանը Բէ Տօրէյի հաղորդեց թէ Իտալիա կ'ըն-
դունի Ֆրանսայի առաջարկը պատերազմական նոր նաւերու շինութեան հա-
մար նշանակուած 31, դեկտեմբերը:

Գերմանիոյ Պատասխանը

Գերմանիա ալ տուած է իր պատասխանը պրն. Պրիանի յուշագրին:
Գերմանիայ կը խոստանայ գործնական համագործակցութիւն:

Անհախճայնութիւն Հիմնէնպուրկի եւ

Վարչապետի Միջեւ

Նախագահ Հիմնէնպուրկ նամակով մը յայտնած է վարչապետին թէ
պիտի չմասնակցի Հոնոսի ազատագրութեան հանդէսներուն Պողպատէ սա-
ղաւարտ ընկերակցութեան միջոցովուն պատճառաւ: Վարչապետը պատաս-
խանած է թէ պատրաստ է այս արգելքը վերցնելու պայմանաւոր յիշեալ
ընկերակցութիւնը յանձնառու ըլլալ չքանարարի ընկերակցութեանց յատուկ
օրէնքը:

Տափ Սիպերիոյ մէջ

Ջերմութեան զօրաւոր ալիք մը Սիպերիոյ մէջ մեծ փոստեր պատճա-
ռած է: Հուլիսի մէջ 63 աստիճանի բարձրացած է ջերմութիւնը: Հարեւրաւոր
անձեր մեռած են իսկ Ամու գետը յորդած է սարոյցներու հաշիւուն պատ-
ճառաւ:

Նախա փաւա Զերբակալուած 4 Յոյներ

3 Իտալացիներ 1 Ֆրանսացի եւ 1 Անգլիացի

Մեռած

Եփրատի անկարգութեանց հետեւեալով Մալթայէն անգլիական նաւա-
տորմիկ մը 6000 զինուոր ցամաք հանած է Ալեքսանտրիա կատարուած ցոյցի
միջոցին սպաննուած են 4 յոյներ 3 իտալացիներ 1 ֆրանսացի և 1 անգլա-
ցի: Վարչապետ Սըուքը փաշայ ձերբակալել տուած է Նահաւ Փաշան և Վաֆաի
Շէֆերը: Խորհրդարանի նիստերը դադարեցուցուած են:

Ա. Բայ 16ին Դահլիշի շուկան և հանրային հաստատութիւնները փակ-
ուած են ի նշան բողոքի: Անգլիական ուժեր զրկուած են կառավարութեանց
բողոքին վրայ:

Տանիմարքա եւ Նորվեգիա

Կը Պատասխանեն

Տանիմարքայի եւ Նորվեգիոյ Պրն. Պրիանի լիւշին պատասխանները
Փարիզի մէջ յաճուած են: Երկու կառավարութիւններն ալ կընդունին
կոչին համական կէտերը:



ԴՊՐՈՑ

ՁԵՒԻ ԵՒ ԿԱՐԻ

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ԵՒ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ,

Սիւն լէրի Կարի Մեքենայի Ընկերութիւն

Պաշիւ ունիմ ծանուցանելու մեր

յար լէի յաճախողներուն թէ՝

ԲԱՅՈՒԱԾ Է

30 ՅՈՒՆԻՍ 1930 ԵՒ

ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսուցման, Զեւելու, Կարելու. Ասեղնագործութեան եւ

Նորագութեան Սիմկէրի Կարի Մեքենաներով

Հասցէ Բիւ Կուրժնար Միսայիլի գիմայ Պէյլ Ջապպալ

ԴԱՍԱԽԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՆ ԱՄԷՆ ԱՆՁԻ

Դասերը Զրի են

Այն անձերը որոնք կը փափաքեն հետեւի դասերուն պիտի ծանին:

ՄԻՆԿԵՐ ԿԱՌ ՄԵՔԵՆԱՅԻ
ԸՆԿԵՐԱԿԱՆ

Տէր. և Տնօրէն ժԱԳ ԱԳՅՈԲԸ